

**ՀՀ ֆինանսների նախարարություն**

**Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ 7/6**

**8 հուլիսի 2014 թ.**

Քննարկվեց քաղաքացի Սողոմոն Կոստանյանի 11.06.2014 թ-ի գանգատը ՀՀ ԿԱ ՊԵԿ էջմիածնի ՏՀՏ պետի 11.04.2014 թ-ի թիվ 77 որոշման դեմ:

**Քաղաքացի Սողոմոն Կոստանյանի գանգատում բերված փաստարկները.**

Սողոմոն Կոստանյանը 11.02.1998 թ-ին պետոեզիստրից ստացել է անհատ ձեռներեցի վկայական մանրածախ առևտրով զբաղվելու համար: Առևտրով զբաղվել է մինչև 22.12.1998 թ-ը: Այդ ժամանակահատվածում կատարել է բոլոր հարկային պարտավորությունները և վճարումները: 22.12.1998 թ-ին ներկայացրել է գործունեությունը ժամանակավորապես դադարեցնելու դիմում, դադարեցրել է գործունեությունը և մեկնել է արտագնա աշխատանքի: Հետևապես, չէր կարող որևէ պարտավորություն չկատարել: Սակայն, էջմիածնի ՏՀՏ պետի կողմից 11.04.2014 թ-ի որոշմամբ իրականացվել է վարչական վարույթ, որի արդյունքում կայացվել է թիվ 77 որոշումը, որով ա/ծ Սողոմոն Կոստանյանից ենթակա է գանձման 403.119 դրամ պարտավորության գումար:

Պետոեզիստրից գանգատաբերը ստացել է տեղեկատվություն, որի համաձայն անհատ ձեռնարկատիրոջ վկայականը տրված է եղել ժամանակավոր (այլ ոչ թե անժամկետ) և 2000 թվականի հունվարի 1-ից այն համարվել է ուժը կորցրած ու անվավեր: Պարզաբանումներ ստանալու համար դիմել է էջմիածնի ՏՀՏ իրավաբանական և տեղեկատվական բաժիններ: Վերջիններիցս ստացվել է մնացորդների մասին տեղեկանք, որի համաձայն 16.04.2014 թ-ի դրությամբ ա/ծ-ի կարգավիճակը եղել է <գործող>, ինչը անհնար է: Գանգատաբերի պահանջով իրեն են տրամադրվել նաև արխիվում պահպանվող գործի փաստաթղթերի պատճենները, որոնք ներկայացվում են: Գանգատաբերը գտնում է, որ տվյալ դեպքում չի կիրառվել ՀՀ կառավարության որոշմամբ նախատեսված ոչ մի արտոնություն: Տեղեկացել է նաև, որ ՏՀՏ-ն իր նախաձեռնությամբ պարտավոր էր դիմել պետոեզիստր վկայականը ուժը կորցրած ճանաչելու պահանջով, ինչը չի կատարվել: Գանգատաբերը կրկին անգամ նշում է, որ 22.12.1998 թ-ից հետո չի աշխատել, հետևապես գտնում է, որ էջմիածնի ՏՀՏ պետի թիվ 77 որոշումը անօրինական է:

**ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.**

ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ էջմիածնի ՏՀՏ պետի 11.04.2014 թ-ի թիվ 77 որոշման համաձայն 10.04.2014 թ-ի դրությամբ Ա/Ձ Սողոմոն Կոստանյանի չկատարված հարկային պարտավորությունները կազմում են 403.119 դրամ, որից սոցիալական վճարի ապառք՝ 240.000 դրամ, տույժ՝ 131.399 դրամ, եկամտահարկի ապառք՝ 31.720 դրամ: Սոցիալական վճարի գումարներն առաջացել են 2009-2012 թ.թ. նվազագույն սոցիալական ապահովության վճարների գումարներից, իսկ եկամտահարկի

գումարը՝ հարկային տեսչություն ներկայացված 1999 թ-ի նվազագույն եկամտահարկի հաշվարկից:

Քննարկման ընթացքում նշվեց նաև, որ ՀՀ պետական ռեգիստրի կողմից 11.02.1998 թ-ին տրամադրված անհատ ձեռներեցի պետական գրանցման թիվ 043885 վկայականի համաձայն քաղաքացի Սողոմոն Կոստանյանը գրանցված է ՀՀ պետական ռեգիստրում որպես անհատ ձեռներեց 06.02.1998 թ-ից: Ընդ որում, անհատ ձեռներեցի պետական գրանցման թիվ 043885 վկայականում նշված է, որ վկայականը ուժի մեջ է միայն ներդիրի հետ:

Հանձնաժողովը, ուսումնասիրելով վերոգրյալ վկայականի 11.02.1998 թ-ի թիվ 01 ներդիրն արձանագրեց, որ վերջինիս համաձայն Ա/Ձ Սողոմոն Կոստանյանի գործունեության ժամկետը սահմանված է մինչև 01.02.2000 թ-ը:

«Անհատ ձեռնարկատիրոջ մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի համաձայն. «Ֆիզիկական անձի, որպես անհատ ձեռնարկատիրոջ, իրավունակությունն ու գործունակությունը ծագում են նրա պետական հաշվառման պահից և դադարում են այդ ֆիզիկական անձի իրավունակության կամ գործունակության դադարման, ինչպես նաև օրենքով նախատեսված դեպքերում պետական հաշվառումն ուժը կորցրած կամ անվավեր ճանաչվելու պահից»:

Քննարկվող դեպքում անհատ ձեռներեցի պետական գրանցման թիվ 043885 վկայականում, ինչպես նաև վկայականի 11.02.1998 թ-ի թիվ 01 ներդիրում կատարված գրառումների համաձայն, Ա/Ձ Սողոմոն Կոստանյանը 01.02.2000 թ-ից դադարել է անհատ ձեռնարկատեր համարվել: Այսինքն, դադարել են Սողոմոն Կոստանյանի որպես անհատ ձեռնարկատիրոջ իրավունակությունն ու գործունակությունը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Հանձնաժողովը գտնում է, որ Սողոմոն Կոստանյանի նկատմամբ 2009 թ-ից մինչև 2012 թ-ն ընկած ժամանակահատվածի համար նվազագույն սոցիալական ապահովության վճարների գծով պարտավորություններ չեն կարող հաշվարկվել:

Ինչ վերաբերվում է ՀՀ ԿԱ ՊԵԿ Էջմիածնի ՏՀՏ պետի 11.04.2014 թ-ի թիվ 77 որոշմամբ եկամտահարկի գծով գանձման առաջադրված 31.720 դրամին, ապա հաշվի առնելով, որ նշված գումարն առաջացել է հարկային տեսչություն ներկայացված 1999 թ-ի նվազագույն եկամտահարկի հաշվարկից, այն Սողոմոն Կոստանյանի կողմից ենթակա է վճարման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով Հանձնաժողովը

## ո Ր Ո Չ Ո Ւ Մ Է՝

ՀՀ ԿԱ ՊԵԿ Էջմիածնի ՏՀՏ պետի 11.04.2014 թ-ի թիվ 77 որոշումից նվազեցնել 371.399 դրամ:

**Հանձնաժողովի նախագահ**



**Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ**